

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/7**

**17 հունվարի 2017թ.**

Քննարկվեց Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 08.02.2016թ. թիվ 6116970 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ:

#### **Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանը հայտնում է, որ Արարատի մարզ, գ.Մրգավետ, Աբովյան 2 հասցեում իրեն պատկանող խանութում 19.01.2016թ. կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 08.02.2016թ. կազմված թիվ 6116970 ակտի համաձայն առաջադրվել է 150.000 դրամի (105.000 դրամ տուգանք և 45.000 դրամ հարկային մարմնի զարգացման ֆոնդին) չափով տուգանք:

19.03.2016թ. 105.000 դրամ տուգանքը բանկային սխալ փոխանցման հետևանքով մուտքագրվել է թիվ 900005240487 (իրավախախտումների համար կիրառվող տուգանքներ և պատժամիջոցներ) հաշվեհամարին:

Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանը 02.05.2016թ. Արտաշատի ՏՀՏ է ներկայացրել թվով երեք դիմում, որոնցից երկուսը ՀՀ ՖՆ տեղակալ գլխավոր գանձապետ Ա.Ջանջուղազյանին, խնդրելով որ սխալ փոխանցված գումարը փոխանցեն իր հաշվեհամարին, այնուհետև նշված հաշվեհամարից փոխանցեն ՀԴՄ տուգանքի հաշվեհամարին: Երրորդ դիմումը ուղված է եղել Արտաշատի ՏՀՏ պետին, խնդրանքով, որ վերոնշյալ գումարը փոխանցվի իր հաշվեհամարին:

20.09.2016թ. դիմել է ՀՀ ՖՆ նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին՝ գումարը թիվ 900005241022 (գանձապետական) հաշվեհամարին վերաձևակերպելու խնդրանքով: Դիմումը բավարարվել է և գումարը վերաձևակերպվել է վերոնշյալ հաշվեհամարին: Սակայն, համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի, գումարը կրկնապատկվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանը խնդրում է չկիրառել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ պետի 15.01.2016թ. թիվ 6116970 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ջոհրապ Թորոսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 08.02.2016թ. թիվ 6116970 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին»

ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տուգանքը և վճարման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի համաձայն առաջադրված տուգանքից 105.000 դրամը պետք է վճարվեր թիվ 900005241022 հաշվեհամարին, իսկ 45.000 դրամը՝ թիվ 900413000010 հաշվեհամարին:

Սակայն տեղի է ունեցել թյուրիմացություն, որի հետևանքով բանկի աշխատակցի կողմից 105.000 դրամը թիվ 900005241022 հաշվեհամարին փոխանցվելու փոխարեն, այն փաստացի փոխանցվել է 900005240487 հաշվեհամարին: Տեղեկանալով տեղի ունեցածի մասին Ա/Ձ Ձոհրապ Թորոսյանը 30.03.2016թ. համապատասխան գրություններ է ուղարկել Արտաշատի ՏՀՏ պետին, ինչպես նաև ՀՀ գլխավոր գանձապետին՝ սխալ հաշվեհամարին փոխանցված գումարը վերաձևակերպելու խնդրանքով: Սակայն համապատասխան թիվ 900005241022 հաշվեհամարին գումարը փոխանցվել է միայն 20.10.2016թ.: Արդյունքում, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Ակտով առաջադրված տուգանքը 09.04.2016թ. կրկնապատկվել է:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ակտով առաջադրված տուգանքի գումարը սխալ հաշվեհամարին է փոխանցվել թյուրիմացաբար և տեղեկանալով տեղի ունեցածի մասին՝ մինչև տուգանքի կրկնապատկվելը, Ա/Ձ Ձոհրապ Թորոսյանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ տեղի ունեցած սխալը ուղղելու և վերոգրյալ գումարը համապատասխան հաշվեհամարին փոխանցելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Ձոհրապ Թորոսյանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկամսյա ժամկետում ՀՀ պետական բյուջե է փոխանցվել Ակտով առաջադրված տուգանքի գումարը, Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Ձոհրապ Թորոսյանի անձնական հաշվի քարտից նվազեցնել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 08.02.2016թ. թիվ 6116970 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ